ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

HEAD OF STAFF

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 02 42, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: headofstaff@edu.am, www.edu.am

N 04/23/1260-13 07 02 2013թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
իրավաբան Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարություն հասցեագրված Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԿԳՆ պաշտոնական /info@edu.am/ հասցեին ստացված դիմումները, որոնք ստորագրված են և նշված է դիմողի տվյալները /դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը/ մուտքագրվում և հաշվառվում է ընդհանուր հիմունքներով՝ համապատասխան բաժնում:

2012թվականին ՀՀ ԿԳՆ աշխատակազմի քարտուղարություն մուտքագրվել է 4709 դիմում:

Էլեկտրոնային հարցումների հաշվառումը ԿԳՆ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության գործառույթներից է:

2012 թվականին վարչությունում հաշվառվել և պատասխան է տրվել 318 էլեկտրոնային հարցման, մասնավորապես. հունվար- 23, փետրվար- 22, մարտ- 25, ապրիլ- 21, մայիս- 34, հունիս- 24, հուլիս- 22, օգոստոս- 29, սեպտեմբեր- 39, հոկտեմբեր- 30, նոյեմբեր- 23, դեկտեմբեր- 26 հարցում:

Ստացված հարցումներն ըստ բովանդակության.

հանրակրթության վերաբերյալ ստացվել է 112 հարցում, մասնագիտական կրթության՝ 134 հարցում, որից 107-ը բարձրագույն և հետբուհական, իսկ 17-ը՝ նախնական և միջին մասնագիտական կրթության վերաբերյալ:

Այլ հարցումների խմբում ընդգրկված են 72-ը, որոնք հիմնականում վերաբերել են սոցիալական փաթեթին, ուսումնական հաստատությունների լիցենզավորմանը, ոլորտում իրականացվող բարեփոխումներին և այլ խնդիրների:

Հարգանքով՝ ՄՀԵՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Կատ. Յ. Միրզախանյան
Հեռ. 52-73-43